

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ

14 Յունիս ԿԻԼԻԿԻԱ առազաստանաւը բարեյաջող ծովագնացութենէ ետք հասաւ Գերմանիոյ Պրէմերիաֆըն նաւահանգիստ-քաղաքը: Նոյն օրը, ժամը 12-ին, տեղի ունեցաւ նաւի պաշտօնական դիմաւորման արարողութիւնը: Արարողութեան ներկայ գտնուեցան ՀՀ Գերմանիոյ դեսպանուհին՝ տիկ. Կարինէ Ղազինեան, Գերմանիոյ հայոց առաջնորդին ներկայացուցիչ Ս. Սերովբէ վրդ. Իսախանեան, Պրէմերիաֆընի փոխքաղաքապետ Կէօսս, նաւահանգիստի ղեկավարը, շրջանի հայոց հոգեւոր հովիւ Ս. Խաչատուրաբոյ. Կնեազեան, ինչպէս նաեւ շուրջ երեք տասնեակ հայորդիներ, մօտակայ Պրէմէն քաղաքէն:

Դիմաւորմանը բարձրացուեցան Հայաստանի եւ Գերմանիոյ դրօշները, հնչեցին երկու երկիրներու հիմները: Պաշտօնական խօսք արտասանեցին տիկ. Ղազինեան, փոխքաղաքապետը, յայտնի գրող եւ հրապարակախօս եւ նաւի անձնակազմի անդամ Զորի Բալայեան: Այնուհետ Սերովբէ Հայր Սուրբը օրհնելով նաւն ու անձնակազմը, մաղթեց նաւագնացութեան յառաջիկայ փուլերու ընթացքին բարեյաջող եւ անփորձանք նաւարկութիւն:

Յետ դիմաւորման ՀՀ Դեսպանութեան կողմէ տրուեցաւ պաշտօնական ճաշ:

Յաջորդ օրը ԿԻԼԻԿԻԱ նաւուն անձնակազմին հաճելի անակնկալ հրամցուցին Համպուրկահայ Մշակութային Միութեան շուրջ երեք տասնեակ անդամները: Անոնք ընդառաջելով Սերովբէ Հայր Սուրբի խնդրանքին, հայկական տարազներով, արտասանութեամբ, երգ ու պարով ճանապարհեցին ԿԻԼԻԿԻԱ նաւը դէպի նաւարկութեան յաջորդ փուլ:

18 Յունիս, Կիրակի, Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի տօնին, Նոյվիտի Հայ Համայնքը իր հիմնադրման 25-ամեակի առթիւ նախաձեռնեց ուխտագնացութիւն մը դէպի Քելվէլա Գերմանիոյ ամենամեծ եւ յայտնի ուխտավայրը: Նայվիտի, Պիլէֆէլտի եւ Քէօլնի Հայ Համայնքներէն մօտ 80 ուխտաւորներ մասնակցեցան ուխտագնացութեան, որ սկսաւ Ս. Պատարագով: Ս. Պատարագը մատուցանեց Ս. Հայագատ քինյ. Մարտիկեան եւ Ս. Սեղանին սպասարկեցին Կարպիս սրկ. Քարաքավաֆ, Պետրոս սրկ. Կարինեան եւ Սայաթ սրկ. Պօյաճեան, ինչպէս նաեւ մասնակից համայնքերէն դպիրներ: Ս. Պատարագէն յետոյ ուխտաւորները աղօթքով յիշեցին Քրիստոսի խաչի ճամբան: Ուխտագնացութիւնը վերջ գտաւ երեկոյեան հսկումի արարողութեամբ ու դէպի «Մխիթարիչ տրտմողաց» ողորմութեան սրբապատկերը պարունակող մատրան կատարուած հանդիսաւոր թափօրով:

29-30 Յունիս Սերովբէ վրդ. Իսախանեան յանուն Գերմանիոյ Հայոց Առաջնորդութեան իր մասնակցութիւնը բերաւ Գերմանիոյ Հէօքսթեր գիւղաքաղաքի Ղպտի վանքին մէջ տեղի ունեցած Գերման Աւետարանական Եկեղեցւոյ եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Գերմանիոյ Առաջնորդութիւններու միջեւ տեղի ունեցող Խորհրդակցական ժողովներուն: Այս տարուան քննարկումներու ընթացքին, ի թիւս այլ հարցերու քննարկմանց, պատրաստուեցաւ Միջարանուանական «Սուրբ Պսակի» կամ Ամուսնական արարողութեան մասին երկկողմանի յայտարարութեան վերջնական բնագիրը, որ այս տարի պաշտօնական արարողութեան մը ընթացքին պիտի ստորագրուի Գերման Աւետարանական Եկեղեցւոյ Խորհուրդի նախագահ Եպիսկոպոս Հիւպերի եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու առաջնորդներու կողմէ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ